

ՄՊԱՆԴԱՆՈՑԻ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺ ՓՈՐՉԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Կառույց/հաստատություն

ՀՀ տարբեր մարզերում տեղակայված սպանդանոցներ (բազմաթիվ թափուր աշխատատեղեր)

Պաշտոնի անվանում

Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետ

Ժամկետը

Անժամկետ

Աշխատանքային ժամեր

Լրիվ դրույք (40 ժամ/շաբաթ)

Հանգստյան օրերին աշխատելը կամ այլ արտաժամյա աշխատանքի ձևը կկարգավորվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն:

Անմիջական դեկավար

Սպանդանոցի տնօրեն/մենեջեր

Աշխատանքի ընդհանուր նկարագիր

Սպանդանոցի անասնաբույժի հիմնական գործառույթը սպանդանոցում կենդանիների նախասպանդային հետազոտության և հետսպանդային փորձաքննության իրականացումն է, ինչպես նաև սպանդի ընթացքի հսկողությունը՝ ապահովելով անվտանգ կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի ստացումը:

Աշխատանքային պարտականություններ

Անասնաբույժ-փորձագետը իրեն ստանձնված բոլոր պարտականությունները կատարում է՝ հետևելով ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտին:

❖ **Կենդանիների ընդունում, պահվածք և նախասպանդային հետազոտություն**

- ✓ Ստուգում է սպանդանոց բերված կենդանիներին ուղեկցող փաստաթղթերը՝ նրանց մուտքը տարածք թույլատրելու համար:
- ✓ Իրականացնում է սպանդանոց բերված կենդանիների նախնական զննում՝ անհրաժեշտության դեպքում մեկուսացնելով կասկածելի կենդանիներին:
- ✓ Ըստ ցուցման որոշ իրավիճակներում կազմակերպում է կենդանիների սպանդի իրականացում անմիջապես տեղում՝ հրահանգավորելով սպանդանոցի համապատասխան անձնակազմին:
- ✓ Համակարգում է սպանդանոց բերված կենդանիների բեռնաթափման, խնամքի ու կերակրման աշխատանքները:
- ✓ Հսկում է հայտնաբերված վատառողջ կամ նորմայից խախտումներ ցուցաբերող մեկուսացված կենդանիների պահվածքը:
- ✓ Իրականացնում է կենդանիների նախասպանդային հետազոտություն:

ՈՒՇԱԴՈՒՐԹՅՈՒՆ. բոլոր աշխատանքներն իրականացվում են համաձայն ՀՀ կառավարության 2006 թվ. հունիսի 29-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը և ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 993-Ն օրենքի ցուցումների:

❖ **Կենդանիների սպանդի գործընթաց**

- ✓ Իրականացնում է ստացված մսեղիքի, գլխի և ներքին օրգանների հետսպանդային հետազոտություն՝ ախտաբանական փոփոխությունների և մակարոյծների ու դրանց թրթուրների, ինչպես նաև սպանդի ընթացում ախտածին հարուցիչներով աղտոտման դեպքերի հայտնաբերման նպատակով, որպեսզի կանխվի սպառողների ախտահարման ռիսկը:
- ✓ Իրականացնում է մսեղիքի և ներքին օրգանների նմուշառություն, քսուկների պատրաստում, ներկում և մանրադիտարկում:
- ✓ Կատարում է մորթի բերված խոզերի ամբողջական և լիարժեք սանիտարական քննություն՝ տրիխինելուսկոպիա:
- ✓ Իրականացնում է սպանդի ընթացքի մշտադիտարկում՝ մսեղիքի հաջորդական շարժման, լվացման և պահեստավորման ընթացքում որևէ կետում աղտոտման ռիսկը բացառելու նպատակով:
- ✓ Հրահանգավորելով սպանդանոցի այլ անձնակազմին կազմակերպում է հայտնաբերված վատառողջ կամ նորմայից խախտումներ ցուցաբերող մեկուսացված կենդանիների սպանդը և հսկում աշխատանքները:
- ✓ Կազմակերպում և հսկում է սանիտարական սպանդի իրականացումը:

- ✓ Կազմակերպում և հսկում է ոչնչացման ենթակա մսի ու մսամթերքի ոչնչացման գործընթացը:
- ✓ Լրացնում և տրամադրում է համապատասխան անասնաբուժական թիվ 5 ձևաթուղթը:
- ✓ Գրանցում է արդյունքները մատյանում/համակարգչային ծրագրում՝ ելնելով սպանդանոցի տեղեկատվության պահպանման պահանջներից:
- ✓ Տրամադրում է մասնագիտական աջակցություն սպանդանոցի տնօրինությանը/մենեջմենթ թիմին սպանդի կազմակերպման բոլոր փուլերում սննդամթերքի անվտանգության կանոնների և ստանդարտների ապահովման ուղղությամբ:
- ✓ Պարբերաբար իրականացնում է նմուշառություն՝ կենդանիների մեկուսարանների, անասնաշենքերի ու անասնաբակերի ախտահանության և մակաբուժազերծման աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. բոլոր աշխատանքներն իրականացվում են համաձայն՝

1. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը և ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 993-Ն օրենքի ցուցումների:
2. ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 31-ի «Կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշման ցուցումների:

Պահանջվող հմտություններ

- ✓ Իր պարտավորություններն իրականացնելիս ցուցադրում է ինքնավարություն և առողջ դատողություն,
- ✓ Դրսևորում է խնդիրներ լուծելու և ժամանակի կառավարման հմտություն,
- ✓ Դրսևորում է վերլուծական հմտություն. իրավիճակից ելնելով խնդիրների լուծման և ճշգրիտ հետևություններ կատարելու ունակություն,
- ✓ Ցուցադրում է տեղեկատվությունը արդյունավետ ներկայացնելու հմտություն,
- ✓ Աշխատակիցների և հաճախորդների հետ շփման ընթացքում դրսևորում է բարձր պրոֆեսիոնալիզմ , ինչպես նաև դրական վերաբերմունք,
- ✓ Դրսևորում է թիմում աշխատելու ունակություն,
- ✓ Ցուցադրում է անձնակազմում առաջացած անհամաձայնությունները և վիճաբանությունները առողջ դատողությամբ վերլուծելու, բանակցելու և կոնֆլիկտները հանգուցալուծելու հմտություն,

- ✓ Ցուցադրում է հաճախորդին ճիշտ ուղղորդելու և խորհրդատվություն տրամադրելու հմտություններ:

Պահանջվող նվագագույն որակավորում

- ✓ Բարձրագույն կրթություն անասնաբուծություն կամ անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտություններում,
- ✓ Սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի **վկայական***,
- ✓ Հայերենի գերազանց իմացություն,
- ✓ Համակարգչից (MS Word, Excel, տվյալների մուտքագրում, պահպանում և փոխանցում) և համացանցից օգտվելու կարողություն:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** Թափուր աշխատատեղի լրացման համար առաջնայնություն կտրվի սպանդանոցի անասնաբույժ-փորձագետի վկայական ունեցող մասնագետներին: Վկայականի ձեռք բերման համար անհրաժեշտ է մասնակցել վերապատրաստման դասընթացի, որի մասնակցության պայմաններին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

Դասընթացներին մասնակցելու համար դիմումների ընդունումը կիրականացվի 2 փուլով՝ 1-ին փուլի վերջնաժամկետը՝ 2020 թվականի մայիսի 13-ի ժամը 13:00-ն է, 2-րդ փուլինը՝ 2020 թվականի մայիսի 18-ի ժամը 13:00-ը (առաջնությունը կտրվի 1-ին փուլով դիմած մասնակիցներին):

